ԵՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

#strongertogether

2021թ. հունիս

2021 թ. հունիսի 20-ին ՀՀ ընտրողները կայցելեն ընտրատեղամասեր: Ընտրություններին աջակցությունը ժողովրդավարացման ուղղությամբ ԵՄ-ի՝ Հայաստանին ուղղված երկկողմանի աջակցության և Արևելյան գործընկերությանն ուղղված տարածաշրջանային աջակցության առանցքային բաղադրիչն է: ԵՄ-ն 2016 թվականից ի վեր Հայաստանում անցկացվող ընտրությունների առաջատար դոնորն է և առաջիկա ընտրություններում կշարունակի լինել այդ ուղղությամբ Հայաստանի հիմնական գործընկերը՝ շուրջ **1 միլիոն եվրո** տրամադրվելով կազմակերպչական աշխատանքներին և դիտորդական գործունեությանը:

Կապիտալացնելով ժողովրդավարական ընտրությունների ուղղությամբ ավելի վաղ արված ներդրումները

Կապիտալացնելով ավելի վաղ արված ներդրումները՝ ԵՄ-ն ընտրությունների կազմակերպմանը ֆինանսական աջակցություն կցուցաբերի **ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Ընտրությունների զամբյուղ» հիմնադրամի** միջոցով՝ միևնույն ժամանակ սատարելով նաև տեղական դիտորդության և քաղաքացիների պատշաճ իրազեկման միջոցով ավելի անմիջական քաղաքացիական մասնակցության ապահովմանն ուղղված **քաղաքացիական հասարակության գործողություններին:**

Թավշյա հեղափոխությունից հետո ԵՄ-ն աջակցեց 2018թ դեկտեմբերին կայացած արտահերթ ընտրություններին՝ մոտ **1.5 մլն եվրոյի** ներդրում կատարելով հանրային տեղեկատվության և հաղորդակցության բարելավման, ինչպես նաև ընտրությունների կառավարման ավելի թափանցիկ համակարգերի (մասնավորապես՝ տեսախցիկների և ընտրողների նույնականացման սարքերի) ուղղությամբ: Դրանք էական դեր ունեցան ընտրությունների նկատմամբ հանրային վստահության, ինչպես նաև ընտրական շրջափուլի ընդհանուր ամբողջականության և թափանցիկության բարձրացման համար ու կշարունակեն օգտագործվել նաև 2021թ. ընտրություններում:

Աջակցություն ՄԱԶԾ «Ընտրությունների զամբյուղ» հիմնադրամի միջոցով



400,000 եվրոյի

«Team Europe» աջակցություն՝ Նիդերլանդներից, Գերմանիայից և Շվեդիայից

✓ Ընտրական գործողությունների **ներառականության, ամբողջականության և թափանցիկության հետագա ամրապնդում**

✓ **Կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրազեկման և հաղորդակցման կարողությունների ամրապնդում** (հատկապես կանանց և քիչ ներկայացված խմբերին)

✓ Ընտրատեղամասերում և հաշվիչ կենտրոններում **COVID-19-ի դեմ անվտանգության կանոնների պահպանման դիտարկման ապահովում**

Աջակցություն տեղական անկախ դիտորդական խմբերին

82,000 եվրո՝ Թրանսփերենսի Հայաստանին

400,000 եվրո՝ ՔՀԿ կոալիցիային

Տեղական քաղաքացիական հասարակությունը և անկախ լրատվամիջոցները վճռական դեր են խաղում ընտրական շրջափուլում, մասնավորապես՝ ընտրողների կրթության, տեղեկատվության և հզորացման նախաձեռնություններում: Ելնելով 2018թ. ընտրությունների ընթացքում նախկին աջակցության փորձից՝ ԵՄ-ն կֆինանսավորի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիային, ինչպես նաև «Թրանսփերենսի ինթերնեշնլ»-ի հայաստանյան նախաձեռնությանը՝

✓ **Բարելավելու ընտրողներին մատուցվող անկողմնակալ տեղեկատվության որակը և մատչելիությունը,** հատկապես՝ առաջին անգամ ընտրողների, կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց համար

✓ **Հետևելու միջազգային ընտրական չափորոշիչների և COVID-19-ի դեմ անվտանգության կանոնների պահպանումը**

✓ Ընտրական գործընթացներին վերաբերյալ **ուսուցում և խորհրդատվական թեժ գիծ ապահովելու հեղինակավոր լրագրողների համար**

✓ **Մշտադիտարկելու ԶԼՄ-ների լուսաբանումը**

✓ Տրամադրելու կարճաժամկետ և երկարաժամկետ **տեղական դիտորդներ**

Այս աջակցությունը կնպաստի նաև 2021 թ. հոկտեմբերին ՏԻՄ ընտրությունների անցկացմանը:

Անկախ խորհրդատվություն՝ Եվրոպայի խորհրդի, Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի կողմից

ԵՄ-ն աջակցում է Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի կողմից ընտրական բարեփոխումների վերաբերյալ բարձր մակարդակի անկախ խորհրդատվության տրամադրմանը՝ ԵՄ-ԵԽ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի միջոցով: 2021թ. ապրիլին միջազգային փորձագետները ներկայացրին առաջարկություններ առ այն, թե ինչպես Ընտրական օրենսգիրքը և դրա հետ կապված օրենսդրությունը համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին:

ԵՄ հիմնական աջակցությունը միջազգային դիտորդական առաքելություններին

Ծրագրային ֆինանսավորումից զատ, ԵՄ-ն հիմնական աջակցություն է ցուցաբերում միջազգային դիտորդական առաքելություններին, այդ թվում.

✓**ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ**-ին. ԵԱՀԿ հիմնական թիմի 11 փորձագետ, 24 երկարաժամկետ դիտորդ և 250 կարճաժամկետ դիտորդ (ներառյալ ԵՄ անդամ երկրներից և ԵՄ պատվիրակության դիվանագիտական անձնակազմից)

✓**ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովին.** ընտրությունների օրվա դիտարկում